ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2021 թվականի N 42

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 105 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 20-ի N 231-Ն հրամանի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքի ղեկավարի՝ 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Գնումների պլանը հաստատելու մասին» N 105 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի ապրիլի 30

գ. Նոր Արտամետ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի
N 42 ՈՐՈՇՄԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ

Պատվիրատուն՝ Նոր Արտամետի համայնքապետարան

(ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման)՝ 207047

Ծրագիրը՝ Համայնքի 2020թ. Բյուջեից իրականացվող

Անվանումը՝ Օրենսդիր և գործադիր Մարմինների պետական կառավարում

Պատվիրատուն՝ Նոր Արտամետի համայնքապետարան

Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգ	Անվանումը	Գնման ձևը (ընթաց ակարգը)	ՉափՄԱՆ միավորը	Միավորի գինը	Քանակը	Ընդամենը ծախսերը /դրամ/
1	2	3	4	5	7	6
	Ապրանքներ					
30197622	Թուղթ Ա4 ֆորմատի	մա	հատ	2000	40	80000
30197231	Ֆայլ /40	ՄԱ	հատ	1000	8	8000
30197231	Ֆայլ /70	ՄԱ	հատ	2000	8	16000
30192121	Գրիչ	ՄԱ	հատ	100	50	5000
30192125	Մարկերներ	ՄԱ	հատ	500	4	2000
30197239	Թղթապանակ կոշտ կազմով	ՄԱ	հատ	1000	8	8000
30192710	Սոսնձամատիտ գրասենյակային	ՄԱ	հատ	200	5	1000
30199230	Նամակի ծրար	ՄԱ	հատ	30	50	1500
30199232	Նամակի ծրար	ՄԱ	հատ	50	50	2500
30199234	Նամակի ծրար	ՄԱ	հատ	20	50	1000
30199238	Նամակի ծրար	ՄԱ	հատ	10	50	500
30199420	Թուղթ նշումների սոսնձվածքով	ՄԱ	հատ	250	10	2500
30199431	Թուղթ նշումների տրձակով	ՄԱ	հատ	100	10	1000
30199792	Օրացույց	ՄԱ	հատ	100	5	500
30199792	Օրացույց	ՄԱ	հատ	1000	3	3000
30192114	Թանաք կնիքի բարձիկի	ՄԱ	հատ	500	2	1000
3014200	հաշվասարք գրասենյակային	ՄԱ	հատ	5000	1	5000
22810000	Գրասենյակային գիրք	ՄԱ	հատ	1500	5	7500
22810000	Հաշվառման մատյաններ	ՄԱ	հատ	2000	5	10000
22451240	Բլանկներ	ՄԱ	հատ	5	200	1000
30237460	համակրգչային ստեղնաշար	մա	հատ		1	5000
30237411	Մկնիկ համակարգչի լարով	մա	հատ		1	5000
30237240	համացանցային տեսախցիկ	Մա	հատ		1	10000
30190000	Զանազան գրասենյակային նյութեր	ՄԱ	դրամ		1	123000

09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր	410	365	149650
09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր	430	350	150500
33761400	Անձեռոցիկ	ՄԱ	դրամ		1	29500
39836000	Ավել	ՄԱ	հատ		1	7500
24451140	Ախտահանիչ նյութեր	ՄԱ	դրամ		1	100000
39831240	Մաքրող նյութեր	ՄԱ	դրամ		1	20000
39831245	Հեղուկ օճառ	ՄԱ	դրամ		1	3000
33141129	Դիմակ	Մա	դրամ		1	100000
39831283	Հատակի լվացման լաթ	Մա	դրամ		1	10000
19641000	Աղբի տոպրակ	Մա	դրամ		1	30000
31151120	Անխափան սնուցման սարք	ՄԱ	հատ		3	150000
30121190	Անհատական համակարգիչ	ՄԱ	հատ		1	200000
3900000	գրասենյակային կահույք, համակարգչային տեխնիկա	ՄԱ	դրամ		1	189000
	Ծառայություն					
65300000	Էներգետիկ ծառայություններ	ՄԱ	կվտ/ժ		1	300000
6400000	Փոստային կապի ծառայություններ	ՄԱ	դրամ		1	15000
6400000	Հեռահաղորդակցման ծառայություններ	ՄԱ	դրամ		1	200000
72400000	Ինտերնետ	ՄԱ	դրամ		1	
92410000	Թերթերին բաժանորդագրման ծառայություններ	ՄԱ	դրամ		1	40000
92421100	Թերթերում հայտարարությունների տպագրում	ՄԱ	դրամ		1	60000
66510000	Ապահովագրական ծառայություններ	ՄԱ	դրամ		1	40000
79211180	Ներքին աուդիտի ծառայություններ	ՄԱ	դրամ		12	360000
79100000	Իրավաբանական ծառայություններ	ՄԱ	դրամ		7	720000
50311120	Համակարգչային սարքավորումների պահպանման և նորոգման ծառայություններ	ՄԱ	դրամ		1	150000
34331300	Ավտոմեքենաների պահպանման և վերանորոգման ծառայություններ	ՄԱ	դրամ		1	150000
79631200	Աշխանակիցների վերապատրաստման ծառայություններ	ՄԱ	դրամ		1	50000
48000000	Համակարգչային ծառայություններ / ՀԾ/	ՄԱ	դրամ		1	120000
98390000	Պատասխանատու ստորաբաժանման, հողաշինական և քաղաքաշինական գործառույթներ և աղբահանության աշխատանքների վերահսկման ծառայություններ	գհ	դրամ		1	1885000
	Ընդամենը					3474150
Անվանումը՝ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ						
Բաժին 01 Խումբ 3 դաս 3 ծրագիր 51						
72411700	Դոմենային անվան	ՄԱ	դրամ		1	10000
48000000	Համակարգչային ծառայություններ /	ՄԱ	դրամ		1	
	Ընդամենը					10000

Անվանումը՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ						
Բաժին 01 Խումբ 6 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					
71241200	նախագծանախահաշվային ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
70000000	կադաստրային ծառայություններ	ԳՀԾ	դրամ		1	1000000
71250000	ԱԳ գնահատման,չափագրման ,	ՄԱ	դրամ		1	300000
99600000	Տպագրատպություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպ.	ԳՀԾ	դրամ		1	50000
90620000	Ձյան մաքրման ծառայություններ	ՄԱ	դրամ			500000
	Ընդամենը					1850000
Անվանումը՝ Քաղաքացիական պաշտպանություն						
Բաժին 02 Խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
35240000	Շչակ	ՄԱ	դրամ		1	
35240000	Շչակի տեղադրում	ՄԱ	դրամ		1	
75222000	Ծառայություններ քաղաքացիական պաշտպանության ոլորտում	ՄԱ	դրամ		1	100000
Անվանումը՝ Պաշտպանույթուն/ այլ դասերին չպատկանող						
Բաժին 02 Խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
75220000	Ծառայություններ պաշտպանության ոլորտում	ՄԱ	դրամ		1	100000
	Ընդամենը					100000
Անվանումը՝ Փրկարար ծառայություն						
Բաժին 03 Խումբ 2 դաս 1 ծրագիր 55						
75251500	Փրկարարական ծառայություններ	ՄԱ	դրամ		1	100000
Անվանումը՝ Ճանապարհային տրանսպորտ						
Բաժին 04 Խումբ 2 դաս 1 ծրագիր 55						
	Աշխատանք					
85200000	Անասնաբուժական ծառայություններ	ՄԱ	դրամ		12	600000
	Ընդամենը					600000
Բաժին 04 Խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
	Աշխատանք					
35120000	Տեսահսկման համակարգ	ՄԱ	դրամ		1	
50531139	Փորձաքննության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	60000
50531140	Փորձաքննության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
45231187	Փողոցների ասֆալտապատում	ԲՄ	դրամ		1	19000000
	Ծառայություն					
45231214	Ճանապարհային նշանների տեղադրում	ՄԱ	դրամ		1	500000
34921140	Ճանապարհային գծանշումներ	ՄԱ	դրամ		1	600000
98111140	Հանրակացարանի հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	200000
71351540	Տեխնիկական հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	590000
71241200	նախագծանախահաշվային ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
	Ընդամենը					20950000

Անվանումը՝ Աղբահանում						
Բաժին 05 Խումբ 1 դաս 1 ծրագիր 51						
	Ապրանքներ					
18141100	Աշխատանքնային ձեռնոցներ	ՄԱ	դրամ			20000
19641000	Պոլիէթինելային պարկեր աղբի համար	ՄԱ	դրամ			30000
						50000
	Ծառայություն					
90611100	Փողոցների մաքրման ծառայություններ	ՄԱ	ամիս			
90511100	Աղբահանություն 2021	ԳՀ	ԴՐԱՄ		1	2400000
	Ընդամենը					2400000
Անվանումը՝ Կեղտաջրերի հեռացում						
Բաժին 05 Խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
	Աշխատանքներ					
44130000	Ջրահեռացման համակարգի կառուցում	գհ	դրամ		1	
	Ծառայություն					
98111140	Հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	88000
71351540	Տեխնիկական հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	296000
71241200	նախագծանախահաշվային ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
50531140	Փորձաքննության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
						0
Անվանումը՝Փողոցների լուսավորում						
Բաժին 06 Խումբ 4 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					
65300000	Էներգետիկ ծառայություն	ՄԱ	կվտ/ժ		12	2000000
50232100	Փողոցային լուսավորության պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ		1	1000000
34921450	Փողոցային լուսավորության անցկացում	ՄԱ	դրամ		1	
98111140	Հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
71351540	Տեխնիկական հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
50230000	Փողոցային լուսավորության հիմնանորոգում	ՄԱ	դրամ		1	
50531140	Փորձաքննության ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
71241200	նախագծանախահաշվային ծառայություններ	ՄԱ	դրամ		1	
	Ընդամենը					3000000
Անվանումը՝Այլ մշակութային կազՄԱկերպություններ						
Բաժին 08 Խումբ 2 դաս 4 ծրագիր 51						
	Ապրանքներ					
39220000	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	ՄԱ	դրամ		1	70000
44411120	Ջրի Ծորակ	ՄԱ	դրամ			30000
15800000	Սնունդ և ըմպելիք	ՄԱ	դրամ			150000
03121200	Ծաղիկներ	ՄԱ	դրամ			50000
18530000	Նվերներ	ՄԱ	դրամ			600000
39000000	կահույք, կենցաղային տեխնիկա	ՄԱ	դրամ			1000000
	Ծառայություն					
34941160	Ազդանշանային համակարգի նորոգում	Մա	դրամ			50000
98341140	շենքի պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ			500000

65300000	Էներգետիկ ծառայություն	ՄԱ	կվտ/ժ		1	50000
09411700	բնական գազ	ՄԱ	խմ			450000
64210000	Հեռախոսավարձ	ՄԱ	դրամ		1	20000
65000000	Կոմունալ ծառայություն	ՄԱ	դրամ			25000
65000000	Գասպառման համակարգի տեխ. Սպասարկում	ՄԱ	դրամ			30000
79951100	միջոցառումների կազմակերպման ծառայություններ	ՄԱ	դրամ		1	170000
76200000	Մասնագիտական ծառայություններ	ՄԱ	դրամ			60000
	Ընդամենը					3255000
Անվանումը՝ Տարրական ընդհանուր կրթություն						
Բաժին 09 Խումբ 1 դաս 2 ծրագիր 51						
	Ապրանքներ					
18530000	Նվերներ	ՄԱ	դրամ		1	100000
	Ընդամենը					100000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2021 թվականի N 43

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված կարգի 139-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Կառուցապատող Էդուարդ Կարապետյանին տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 15-րդ փողոց թիվ 16 հասցեում կառուցված բնակելի տան շինարարական աշխատանքների իրականացման ավարտը փաստագրելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի ապրիլի 30

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2021 թվականի N 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՃՈՒՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում անցկացվող աճուրդի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի ապրիլի 30

գ. Նոր Արտամետ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 44 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի (այսուհետ՝ աճուրդի կազմակերպիչ) կողմից հրապարակային աճուրդների միջոցով Նոր Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման գործընթացը:
2. Աճուրդները կազմակերպվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման և սույն կանոնակարգով սահմանված կանոններով:
3. Աճուրդներն իրականացվում են բաց դասական աճուրդի կազմակերպման ձևով:
4. Աճուրդի կազմակերպիչը համայնքի ղեկավարն է: Աճուրդների իրականացման նպատակով աճուրդի կազմակերպիչը ստեղծում է աճուրդային հանձնաժողով առնվազն 3 անդամով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համայնքապետարանի աշխատակազմի մասնագետներ և ավագանու անդամներ:
5. Աճուրդային հանձնաժողովի կազմից նշանակվում է աճուրդավար և արձանագրող:
6. Աճուրդային հանձնաժողովը իրավազոր է, եթե ներկա են աճուրդային հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը:
7. Աճուրդի մասին հայտարարության (հրապարակային ծանուցման) տեքստը հաստատում է աճուրդի կազմակերպիչը:
8. Աճուրդին մասնակցել ցանկացողները լրացնում են սահմանված ձևի հայտ և հանձնում աճուրդավարին: Հայտ լրացրած անձի տվյալները նույն օրը աճուրդի արձանագրողը գրանցում է հայտերի ընդունման մատյանում (կցվում է՝ Ձև N 1) և տրամադրում է մասնակցի վկայական (կցվում է՝ Ձև N 2):
9. Աճուրդի մասնակցության հայտը չի ընդունվում, եթե հայտ ներկայացնողը Հողային օրենսգրքով սահմանված հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտ չէ:
10. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

II. ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

11. Աճուրդն անցկացվում է հրապարակային ծանուցման մեջ նշված օրը՝ 9:00-ից 19:00-ն ընկած ժամանակահատվածում:
12. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ:

    Աճուրդի կազմակերպիչը աճուրդի կայացման վայրում ցուցատախտակի վրա զետեղում է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:
13. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկությունները:
14. Աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կատարվում են օրենքով սահմանված կարգով:
15. Աճուրդն սկսելու պահից երեսուն րոպե առաջ կազմակերպիչը հնարավորություն է ընձեռնում մասնակիցներին ծանոթանալու աճուրդի կանոնակարգին՝ մասնակիցների համար հասանելի տեղում կանոնակարգը փակցնելու միջոցով:
16. Կանոնակարգի և աճուրդի հետ կապված այլ փաստաթղթերի պատճենները տրամադրվում են համապատասխան դիմումի հիման վրա: Յուրաքանչյուր պատճենահանված էջի համար վճարը սահմանվում է 50 (հիսուն) դրամ:
17. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք (այսուհետ՝ դիտորդ) աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար աճուրդի սկսելու պահից 30 րոպե առաջ վաճառվում են դիտորդի տոմսեր (կցվում է՝ Ձև N 3), որի համար վճարվում է մուտքի վճար:
18. Մուտքի վճարի չափը (դիտորդի տոմսի արժեք) սահմանվում է՝ 5000 (հինգ հազար) դրամ:
19. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին.
    1) չհայտնել իրենց դժգոհությունը, սպառնալիքը կամ գոհունակությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի գործողությունների նկատմամբ,
    2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,
    3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,
    4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ,
    5) չթաքցնել օրենքով սահմանված՝ աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

III. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԼՈՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

20. Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ մուծել են նախավճարը՝ աճուրդում վաճառվող լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և ստացել մասնակցի վկայական:
21. Աճուրդի կազմակերպիչը հրապարակային ծանուցման պահից սկսած՝ մինչև աճուրդի բացմանը նախորդող 3-րդ աշխատանքային օրը մասնակիցներին ընձեռում է հնարավորություն՝ լոտ(եր)ն ուսումնասիրելու համար դիմել համայնքապետարան յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի):
22. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

IV. ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

23. Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին (կցվում է՝ Ձև N 4)՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթեր:
24. Աճուրդներն անց են կացվում դասական (գնի ավելացման) եղանակով:
25. Աճուրդը սկսվում է, եթե մասնակիցների թիվը մեկ կամ ավելի է:
26. Աճուրդն անցկացնում է աճուրդավարը, որը հայտարարում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը, աճուրդային նվազագույն քայլի չափը, որը սահմանվում է լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և կարող է կլորացվել դեպի վեր՝ մինչև մոտակա հարյուրյակը:
27. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իրեն տրված մասնակցի վկայականը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռք բերելու մասին:
28. Յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով՝ քայլի չափից ոչ պակաս գումարով՝ բարձրացնելով մասնակցի վկայականը:
29. Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրճիկի երրորդ հարվածից հետո:
30. Եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին:
31. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով՝ աճուրդային հանձնաժողովի անդամները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ որոշում են

միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը պարունակող քառածալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարն առաջինն է հանում արկղից:

32. Աճուրդի արդյունքներն արձանագրվում են աճուրդի արձանագրողի կողմից: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և հանձնաժողովի անդամները ստորագրում են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:
33. Եթե աճուրդի հաղթող ճանաչված անձն արձանագրության վերաբերյալ առարկություններ է ունենում, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

V. ԼՈՏԻ ԳՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

34. Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան:
35. Աճուրդում հաղթող ճանաչված անձն աճուրդի արդյունքների ամփոփումից հետո 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի գինը:

    Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է լոտի օտարման մասին որոշման նախագիծ, որտեղ նշվում են վճարման ենթակա գումարի չափը(երը) և համապատասխան հաշվեհամարները: Նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

    Աճուրդում հաղթող ճանաչված անձը որոշման նախագծում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է նշված հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնում աճուրդի կազմակերպչին:

    Աճուրդում հաղթող ճանաչված անձի կողմից լրիվ վճարումները կատարելուց հետո, բայց ոչ ուշ աճուրդի արդյունքները ամփոփելուց հետո 10-րդ օրը, աճուրդի կազմակերպիչը հաղթողին է տրամադրում աճուրդի արձանագրության մեկ օրինակը, լոտի օտարման մասին կազմակերպչի որոշումը և օտարման գործարքի համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

    Աճուրդում գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը:
36. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում, և հաղթող է ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը, որը նույնպես պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել լոտի գինը: Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:
37. Աճուրդը համարվում է չկայացած, եթե աճուրդի մասնակցության համար հայտ չի ներկայացվել, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է լոտը ձեռք բերելուց:
38. Աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացքում կազմված փաստաթղթերն ու նյութերը պահպանվում և արխիվացվում են:

Ձև N 1

ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Հայտատուի ազգանունը, անունը, հայրանունը	Անձնագրային տվյալներ	Պահանջվող լոտը	Ծածկագիրը և մակերեսը	Նպատակային նշանակությունը	Մեկնարկային գինը	Հայտը ընդունման ամսաթիվը	Հայտատուի ստորագրությունը
1.								
2.								
3.								

Ձև N 2

ՎԿԱՅԱԿԱՆ N ___
ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑԻ

Աճուրդի կազմակերպիչ՝ Նոր Արտամետ համայնքի ղեկավար

Աճուրդի անցկացման ժամանակը՝ _____ _____ 202 թ. ժամը _____

Աճուրդի անցկացման վայրը (հասցեն)՝ Նոր Արտամետի համայնքապետարանի վարչական շենք (Նոր Արտամետ, 1-ին փողոց N 107)

Աճուրդի մասնակցի անունը, հայրանունը և ազգանունը՝ _____

Վճարված նախավճարի չափը (դրամ)՝ _____

Աճուրդի կազմակերպիչ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 3

ՏՈՄՍ
ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ
(ԴԻՏՈՐԴԻ)

Աճուրդի կազմակերպիչ՝ Նոր Արտամետ համայնքի ղեկավար

Աճուրդի անցկացման ժամանակը՝ _____ _____ 202 թ. ժամը _____

Աճուրդի անցկացման վայրը (հասցեն)՝ Նոր Արտամետի համայնքապետարանի վարչական շենք (Նոր Արտամետ 1-ին փողոց N 107)

Դիտորդի անունը, հայրանունը և ազգանունը՝ _____

Տոմսի արժեքը՝ 5 000 դրամ

Աճուրդի կազմակերպիչ՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 4

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը	Անձը հաստատող փաստաթղթի տվյալները	Մասնակցի վկայականի համարը	Մասնակցության վճարի անդորրագրի համարը